ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ (ՀՕԿ-Ը)

«Որպես Ուկրաինայի պատգամավոր մասնակցել եմ ՀՕԿ-ի III համագումարին, Երևանում, որի վարչության անդամն եմ այժմ»,— գրել է սովետահայ անվանի արձակագիր Ակսել Բակունցը 1924 թ. ՍՄԿԿ անդամության թեկնածուի «Անձնական թերթիկում»[1]։

ՀՕԿ-ի Ուկրաինայի մասնաճյուղի ղեկավարությունը Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտի շրջանավարտ Ալեքսանդր Բակունցին, որը նոր էր վերադարձել Հայաստան, հեռագրով լիազորում է ՀՕԿ-ի առաջիկա համագումարում մասնաճյուղի անունից զեկուցում կարդալ։ 1923 թ. հոկտեմբերի 14—19-ը կայացած ՀՕԿ-ի III համագումարում Ա. Բակունցը հանդես է գալիս հաշվետվությամբ, ելույթ է ունենում մաքերի փոխանակության ժամանակ, կազմակերպչական հանձնաժողովի կազմում մասնակցում է ՀՕԿ-ի կանոնագրության վերամշակման սղխատանքին և համագումարին զեկուցում նոր կանոնագրության նախագծի մասին։ Համագումարում Ա. Բակունցը ընտրվում է ՀՕԿ-ի կենտրոնական վարչության անդամ։ Հայտնաբերված է նաև Ա. Բակունցի 1923 թ. հուլիսի 28-ի հետևյալ երկտողը. «Ստացա Զանգեզուրի ՀՕԿ-ի համար 2 օր[ինակ] շրջաբերական»[2]։ Խոսքը «Հայաստանի օգնության կոմիտեի երրորդ համագումարը» ծանուցման (գրքույկի ձևով)[3] մասին է։

Պահպանվել են ՀՕԿ-ի հետ Ա. Բակունցի կապերի մասին վկայող այլ նյութեր ևս. նա մասնակցել է կենտրոնական վարչության նիստերին, դրամական հաշիվներ է ունեցել նրա հետ (պարտք գումար է վերցրել և մարել այն)։ Հետաքրքիր է գրողի «Հովնաթան Մարշ» գրքի (լույս է տեսել 1927 թ.) հետ կապված փաստը։ ՀՕԿ-ը գնել է այդ գիրքը (600 օրինակ) և տարածել արտասահմանում։

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

№ 1

Ակսել Բակունցի զեկուցումը ՀՕԿ-ի III համագումարում

Հայաստանի օգնության կենտ. կոմիտեին
ՀՕԿ-ի 3-րդ համագ. Խարկովի պատգամավոր
Աղեքսանդր Բակունցից

Զեկուցում

[14 հոկտեմբերի, 1923 թ.]

ՀՕԿ-ի Խարկովի ճյուղը կազմակերպվել է սույն թվի մայիսի վերջերին, դաշնության մի քանի անձանց նախաձեռնությամբ։ Կոմիտեն ավելի լրիվ և օրի-

---

1 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 4, ց. 2, գ. 1218, թ. 1, 3։

2 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 178, ց. 1, գ. 70, թ. 21։

3 «Հայաստանի օգնության կոմիտեի երրորդ համագումարը», Երևան, 1923։

նական ձև ստացավ միայն այն ժամանակ, երբ պատշաճ վկայագրով Խարկով եկավ Մոսկվայի կոմիտեի ներկայացուցիչ ընկ. Միրզոյանը, որպես լիազոր-անդամ Մոսկվայի կոմիտեի։

Կոմիտեն կազմակերպելու համար հարկ եղավ գումարել գաղութի ընդհանուր ժողով. հունիս 3-ին, ուր ընտրվեց Խարկովի ճյուղը, հետևյալ կազմով. կոմիտեի նախագահ՝ պրոֆ. Ս. Սուրուկչի, քարտուղար՝ Աղեքսանդր Բակունց (զյուղատնտես), գանձապահ՝ Հ. Ավդալյան (իրավաբան), անդամներ՝ բժ. Խաչ. Սամվելյան, Գ. Տեր-Ղևոնդյան, Ս. Փաշաջի, բժ. Արտ. Մելիք-Փարսադանյան, բժ. Ս. Դաստյան, բժ. Գ. Պատոյան, բժ. Մ. Ազիզյան։

Կոմիտեի առաջին խնդիրն էր հանրացնել գաղութի մեջ ՀՕԿ-ի գաղափարը։ Այդ նպատակով կոմիտեն կազմակերպեց զասախոսություն, ցերեկույթ և տարածեց գաղութի մեջ կոմիտեի կողմից կոչեր, նույն իմաստով։

Մոսկվայի կոմիտեի դրության համաձայն, հրամայական էր առաջին հերթին աջակցություն ցույց տալ Էվջիլարի («Հյուսիսաշեն») ջրանցքի կառուցման, որի ամբողջ ծախքերը հոգալու է Ռուսաստանի, Ուկրաինայի և ընդհանրապես ՍԽՀ Մ-թյան մեջ եղած հայությունը։ Անհապաղ կոմիտեն որոշեց անցնել հանգանակության, սակայն ի նկատի առնելով գործի հարատև ընթացքը, կոմիտեն անհրաժեշտ համարեց յուր աշխատանքին բարեգործական բնույթ չտալ, այլ ստեղծել այնպիսի մի դրություն, որ ստիպեր գաղութի յուրաքանչյուր անդամին մասնակից լինել օգնության գործին։ Դրա համար մոտ երեք շաբաթ տևեց գաղութի (Խարկովի) և շրջակա արվարձանների հայ բնակչության ցուցակը։ Այդ գործում աջակցելու հրավիրված էին Խարկովում եղած նախկին հայրենակցական միությունների ներկայացուցիչները՝ Կարնո, Վանա և այլն։

Գործին ավելի լուրջ բնույթ տալու համար կոմիտեն յուր կազմի մեջ հրավիրեց հայրենակցական միությունների ներկայացուցիչներին, ամեն միությունից մի հոգի, մի հանգամանք, որ շատ պիտի նպաստի նյութական միջոցների գանձման գործում, որովհետև գաղութներում, սովորաբար, հայությունը խմբված է յուրաքանչյուրն յուր հայրենակցության շուրջ։

Կոմիտեի աջակցությամբ հուլիսի վերջին կազմվեց հայ կանանց կոմիտե, որ աշխատում է կոմիտեին կից, նրա դիրեկտիվների համաձայն։ Հանգանակության ընթացքում, ինչպես և ընդհանուր ժողովի ժամանակ շատ անգամ լսվում էր տրտունջի ձայն, թե մենք չգիտենք ինչ է կատարվում Հայաստանում։ Հենց կոմիտեն ինքը դիրեկտիվներ չէր ստանում կենտրոնից, եղած ստատուտը ոչինչ չէր ասում, հարկավոր էր մշակել նոր կանոնադրություն, մի հանգամանք, որ ստեղծում էր խառն ու շփոթ վիճակ կոմիտեի հենց սկզբնական աշխատանքի շրջանում։

Շատ անգամ առաջ էին գալիս տեխնիկական մի շարք կարևոր խնդիրներ, որոնց լուծումից կախված էր ՀՕԿ-ի Խարկովի կոմիտեի հաջող գործունեությունը։ Մի առանձնահատուկ դրություն կա, որ բնորոշ է գաղութների համար. գաղութն ունի յուր կուլտուրական հիմնարկները (դպրոց, ընթերցարան և այլն), որոնց համար հարկավոր էր հոգալ։ Եվ որովհետև գաղութում ՀՕԿ-ից զատ չկա մի որևէ այլ մարմին, կոմիտեն ստիպված էր յուր աջակցությունը ցույց տալ և նման հիմնարկների։

Եզրափակելով իմ համառոտ զեկուցումը, որ ես կատարում եմ կոմիտեի ինձ վրա ուղարկած հեռագրի համաձայն (նոքա առանձին կուղարկեն կենտ-

կոմի հասցեով իրենց հաշվետվությունը), պարտք եմ համարում շեշտել հետևյալ հանգամանքները.

ա) Հարկավոր է ունենալ մի կանոնադրություն, որով նոքա լիազորված լինեն գաղութներում կատարել հանգանակություն։ Այդ հանգանակությունը կամավոր է, սակայն պիտի ստեղծել մի դրություն, որպեսզի բոլորը մասնակցեն օգնության գործին։

բ) Որովհետև Խարկովն Ուկրաինայի մայրաքաղաքն է, և Ուկրաինայի սահմաններում գոյություն ունեն ՀՕԿ-ի մի քանի ճյուղեր, Խարկովի կոմիտեն անհրաժեշտ է համարում վերանվանել իրեն ՀՕԿ-ի Ուկրաինայի կոմիտեի, ենթարկվելով Մոսկվային և հաշվետու լինելով Երևանի առաջ։ Իրավական կողմը ևս անհրաժեշտ է պարզել, ապագա թյուրիմացություններից զերծ մնալու համար։

գ) Խարկովում և ընդհանրապես Ուկրաինայի եղած հայության պարբերաբար իրազեկ դարձնել Հայաստանի ներկա դրության և նրա կարիքներին։

դ) Խնդրվել ՀՕԿ-ի կենտ. կոմիտեին պարբերաբար զեկուցումներ, հրահանգներ ուղարկեն Խարկովի ճյուղին, որով դյուրացրած կլիներ օգնության գործը։

Ի միջի այլոց Խարկովի կոմիտեին ավելի շատ հետաքրքրում է արևմտահայության տեղավորման խնդիրը, ինչպես և ազգային-կուլտուրական հիմնարկների բարվոքումը ոչ միայն Հայաստանում, այլև Ուկրաինայում։

Աղ. Բակունց[4]

Ի վերջո, թույլ տվեք հայտնելու այն ջերմ ցանկությունը, որ ունի Ուկրաինայի հայ գաղութը դեպի Հայաստանը և Հայաստանից եկած ամեն մի իրը, որը նրա համար գումարից ավելի թանկ արժե։

Վերջացնելով խոսքս, Ուկրաինայի ՀՕԿ-ի կողմից ես այս համագումարին պարտք եմ համարում հայտնել հետևյալը։ Դուք ջրանցքներ եք շինում Հայաստանում, վերակենդանացնելու համար նրա խոպան դաշտերը։ Թող այս համագումարն էլ լինի մի մեծ ջրանցք, որով մեր գաղութների էներգիան դա, թափվի այս երկիրը[5]։

№ 2

Ա. Բակունցի ելույթը մտքերի փոխանակության ժամանակ ՀՕԿ-ի III համագումարում

16 հոկտեմբերի, 1923 թ.

Չնայած որ սա ՀՕԿ-ի III համագումարն է, բայց ըստ իր աշխատանքների՝ կարելի է առաջին համագումարը համարել, որովհետև, երբ նկատի ունենանք բոլոր պատգամավորների զեկուցումները, պիտի տեսնենք, որ ամեն տեղ դեռ նոր են սկսում գործերը և դրանք մեծ մասամբ արդյունք են անհատական ջանքերի, չունենալով միանման գործելակերպ, օրինակ՝ Բաթումը մի գաղթականական մարմին է կարծես, Գերմանիայի օգնության մար-

4 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 306, թ. 18—19։ Բնագիր, ձեռագիր, զեկուցման հիմնական մասը՝ գրված Ա. Բակունցի ձեռքով։

5 Նույն տեղում, գ. 80, թ. 4։ Սղագրություն (զեկուցման վերջավորությունը)։

մինը մի միսիոներական կազմակերպություն է, Պարսկաստանը ցանկանում է Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն հաստատել Թավրիզում, դա համարելով ՀՕԿ-ի դործը։ Մի այլ տեղ ՀՕԿ-ը վերածվել է մի առևտրական հաստատության և այլն, և այլն։ Ահա այս բոլոր այլազանությունները հետևանք են այն բանի, որ ՀՕԿ-ը չունի միատեսակ կանոնադրություն։ Նույնիսկ անցագրերի խնդրով շատ անդամ ՀՕԿ-ին դիմումներ են լինում։ Պետք է ճշտորոշել ՀՕԿ-ի գործունեության սահմանները։ Մի քանի տեղերում նկատվում է, որ տեխնիկական զիտելիքներ տարածող ընկերություններ են կազմակերպվում։ Ինչքան էլ դա բարի ցանկությունների հետևանք լինի, այնուամենայնիվ լավագույն կլինի, որ տեղերը նպատակ դնեն իրենց համար միայն նյութական օդնություն հասցնել Հայաստանին, ուրիշ ոչինչ։ Իսկ թե այդ օժանդակությունը ինչպիսի կարիքների վրա պիտի ծախսվի, դա ՀՕԿ-ը ինքը պիտի որոշի։

Պրոպագանդայի խնդիր.— Մոսկվայի կոմիտեն մի Վեստնիկ էր բաց թողել, որ ահագին դեր կատարեց պրոպագանդայի գործում։ Ես առաջարկում եմ նման լրաբերներ հաճախակի հրատարակել և ուղարկել հեռավոր վայրերը, որոնք և գրավոր դիրեկտիվների դերը կկատարեն ՀՕԿ-ի համար։

Պետք է ՀՕԿ-ի տեղական մարմինների սահմանը որոշել՝ ըստ աշխարհագրական սահմանների, որպեսզի անախորժություններ առաջ չգան։ ՀՕԿ-ը իր ուշադրությունը պիտի դարձնի նույնպես արևմտահայ գաղթականության օգնության գործի վրա։ Արևմտահայերով բնակված շրջաններում, Խարկով, Ռոստով և այլն, ուր գործում են մի քանի հայրենակցական միություններ, նրբեմն հարց են բարձրացնում մեր առաջ, թե իրենց հայրենակիցներն օժանդակություն ստանո՞ւմ են արդյոք ՀՕԿ-ից, այլապես կարող են դադարեցնել իրենց օժանդակությունը։

Էվջիլարի ջրանցքը.— ՀՕԿ-ի այս համագումարը հարվածային խնդիր պիտի դարձնի Էվջիլարի ջրանցքի շինությունը և պիտի աշխատի անպատճառ դլուխ բերել այն, թեկուզ հավերժացնելու համար այս համագումարը։ Ուկրաինայի կոմիտեն ինձ լիազորել է 1500 ռ. ոսկով տրամադրել ՀՕԿ-ին, եթե նա անպայման հանձն առնի ջրանցքի կառուցումը։

Ի վերջո, ես առաջարկում եմ, որ մեր հետագա խոսողները Կենտր. վարչության քննադատությունն անելիս միայն լուրջ առաջարկներ անեն։ Ես համաձայն չեմ ընկեր Դարբինյանի խոսքի առաջին մասերին, որոնք աններդաշնակ էին հնչում այս համագումարում։ Մեր բոլորիս նպատակն է համերաշխությամբ տանել շինարարական գործը Հայաստանում։ Ինչքան էլ ընկեր Դարբինյանի խոսքերը լինեն իրավացի, այնուամենայնիվ կարելի էր և չասել այստեղ, համագումարում, այլ պահել մի ուրիշ առթիվ։ Ես վստահ եմ, որ ընկեր Դարբինյանի հոգին էլ պիտի ցավի, երբ իմանա, որ իր այս խոսքերի համար ՀՕԿ-ը զրկվում է որևէ գաղութի օժանդակությունից, քանի որ այդ գաղութների ներկայացուցիչները ինչ որ լսեն այստեղ, կերթան ու կպատմեն[6]։

---

6 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 80, թ. 4։ Բնագիր, ձեռագիր (սղագրություն)։